2021, № 1, 25-35 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.1.025

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2003-2013 ԹԹ.

ԷԴԳԱՐ ՉԱԽՈՅԱՆ

Վրաստանը ԽՍՀՄ փլուզումից հետո, որպես սուվերեն պետություն, միջազգային քաղաքական հարաբերություններից զատ, ակտիվորեն ձեռնամուխ եղավ նաև զարգացնելու երկկողմ և բազմակողմ տնտեսական հարաբերությունները:

1990-ական թվականներին երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ զանգվածային աղքատությունը, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Աջարիայի հիմնախնդիրները, «սև շուկան»[1], թույլ տնտեսությունը, ինչպես նաև կոռումպացված իրավապահ մարմինները սպառնալիք էին դարձել ֆինանսական համակարգի զարգացմանը և օտարերկրյա ներդրումներին: Վրաստանում նաև քաղաքացիական պատերազմ էր, և քաղաքական էլիտայի առաջնահերթ խնդիրն էր համերաշխություն հաստատել:

Վրաստանի հանգուցյալ վարչապետ Զուրաբ Ժվանիան փաստել է, որ 2003 թ. մաքսանենգության և հարկերից խուսափելու պատճառով վրացական կառավարությունը միայն ծխախոտային ապրանքների շրջանառությունից կորցրել է 60 մլն լարի (29 մլն դոլար), իսկ նավթամթերքի թաքցված հարկերից՝ գրեթե 200 մլն դոլար[2]:

Ամերիկացի փորձագետներից մեկը արձանագրել է, որ Վրաստանի կառավարությունը կարող էր փակել բյուջեի պակասուրդը, եթե հարկերն ամբողջությամբ հավաքեր ներկրված երկու տեսակի ապրանքներից՝ բենզինից և ծխախոտից[3]: Երկրի տնտեսությունը հիմնականում կախված էր «սև շուկայից»:

Վրաստանը չէր կարող աջակցություն ակնկալել հարևան երեք երկրներից, քանզի նրանք էլ նոր էին անկախություն ձեռք բերել և գրեթե նույն վիճակում էին: Իսկ Թուրքիայի հետ կայուն հարաբերություններ չէր կարող ունենալ, քանի որ այնտեղ բնակվող էթնիկ աբխազների գործուն միջամտությամբ այդ երկիրը Աբխազիայի հետ սերտ կապերի

---

[1] Տե՛ս **Edgar L. Feige,** Reflections on the Meaning and Measurement of Unobserved Economies: What do we really know about the "Shadow Economy"?, Journal of Tax Administration, Vol 2, № 1, 2016:

[2] Տե՛ս **Shorena Ratiani**, Georgia: Corruption Crackdown Makes Waves, IWPR, Global Voices, Caucasus, March 4, 2004. https://iwpr.net/global-voices/georgia-corruption-crackdown-makes-waves, մուտքը՝ 25.01.2020:

[3] Տե՛ս **Craig MacPhee**, Expert on Georgia Explores "Can Saakashvili Outdo Shevardnadze?", Newswise, January 5, 2004. https://www.newswise.com/articles/expert-on-georgia-explores-can-saakashvili-outdo-shevardnadze, մուտքը՝ 27.01.2020:

մեջ էր[4]: Ուստի Վրաստանին անհրաժեշտ էր ավելի կայուն գործընկեր ու աջակից երկիր, ինչպիսին էր, օրինակ՝ ԱՄՆ-ն:

Վրաստանի ու ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո կողմերին հնարավորություն ընձեռվեց ստեղծելու և հետագայում խորացնելու քաղաքական ու տնտեսական հարաբերությունները. ԱՄՆ-ն այն գերտերությունն էր, որը կարող էր իրական աջակցություն ցուցաբերել Վրաստանին տնտեսական հաջողությունների հասնելու համար: Թեման խիստ արդիական է նաև ՀՀ-Վրաստան տնտեսական հարաբերությունների հետագա խորացման և Վրաստանում բնակվող հայ համայնքի բարեկեցության տեսանկյունից, քանի որ Վրաստանի տնտեսական ու քաղաքական կողմնորոշումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստիպում են ՀՀ իշխանություններին հաշվի նստել դրանց հետ:

1992-2003 թթ. Վրաստանի և ԱՄՆ-ի միջև գործում էին 10-ից ավելի ֆինանսատնտեսական երկկողմ համաձայնագրեր ու պայմանագրեր[5]: Այնուամենայնիվ, նրանց քաղաքական ու տնտեսական կապերի ամրապնդման համար ամուր հիմք դարձավ 2003 թ. «Վարդերի հեղափոխության» արդյունքում իշխանության եկած Միխեիլ Սաակաշվիլիի վարչակազմի առաջ քաշած՝ երկրի տնտեսության զարգացման քաղաքականությունը, որն ամրագրվել է նաև արտաքին քաղաքականության 2006-2009 թթ. ռազմավարական փաստաթղթում[6]: Սաակաշվիլին դիմեց արևմտյան երկրների ֆինանսական օգնությանը, հակառակ դեպքում երկրում կարող էր քաոս սկսվել, և Վրաստանը կդառնար տարածաշրջանում անկայունության օջախ[7]: Սաակաշվիլին առաջին հերթին նկատի ուներ ԱՄՆ-ին և ԵՄ երկրներին: ԱՄՆ-ի՝ Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմի որդեգրած էներգետիկ դիվանագիտության և Նոր մետաքսի ճանապարհի ռազմավարական հայեցակարգով արտաքին քաղաքականության մեջ նոր փուլ դարձավ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկումը, որով Միացյալ Նահանգները ձգտում էր Ռուսաստանին զրկել տարածաշրջանում էներգակիրների տիրապետման մենաշնորհից[8]: Այս հանգամանքով պայմանավորված՝ Վրաստանի քաղաքական ղեկավարությունն ի դեմս ԱՄՆ-ի տեսավ տարածաշրջա-

---

[4] Տե՛ս The Jamestown Foundation, “GEORGIA-TURKEY ENTENTE”, Global Research & Analysis, Monitor Volume: 7 Issue: 22, February 1, 2001, https://jamestown.org/program/georgia-turkey-entente/, մուտքը՝ 06.04.2020:

[5] Տե՛ս United States Department of State, Treaties in Force, “A List of Treaties and Other International Agreements of the United States in Force on January 1, 2011”, “Georgia”, էջ 99:

[6] Տե՛ս **Gela Bezhuashvili,** Ministry of Foreign Affairs of Georgia, “Foreign Policy Strategy 2006-2009”, www.mfa.gov.ge, մուտքը՝ 07.04.2020, https://www.gfsis.org/media/download/GSAC/resources/115_1973_997704_Strategy_MFA2006-2009En.pdf

[7] Տե՛ս “Саакашвили принес присягу президента”, BBC Russian.com, воскресенье, 25 января 2004 г., http://news.bbc.co.uk/hi/russian/news/newsid_3427000/3427187.stm, մուտքը՝ 8.04.2020:

[8] Տե՛ս **Richard D. Kauzlarich,** The New Geopolitics of the South Caucasus: Prospects for Regional Cooperation and Conflict Resolution, “US policy Toward the South Caucasus”, Rowman & Littlefield, 2017, էջ 115:

նում ռուսական քաղաքական ու տնտեսական ազդեցության առավել ցանկալի այլընտրանքն ու Վրաստանի արտաքին ֆինանսավորման հիմնական աղբյուրը:

ԱՄՆ-ն Վրաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց ի վեր գործարկել է Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) երկարամյա աջակցության ծրագիրը, որի միջոցով ամերիկացիները 26 տարում Վրաստանին տրամադրել են ավելի քան 1,8 մլրդ դոլարի աջակցություն, իսկ ԱՄՆ կառավարությունը 50 տարբեր ծրագրերի իրականացման համար տարեկան մոտ 40 մլն դոլար է հատկացնում, որոնք խթանում են Վրաստանի ժողովրդավարության, ազատ շուկայի և արևմտյան կողմնորոշման զարգացումը[9]:

Վրաստանին հատկացվող ֆինանսական ու տնտեսական օգնության բաշխման ու օգտագործման համար պատասխանատու USAID գործակալությունը տրամադրված միջոցների մեծ մասն օգտագործում էր ձևավորելու և զարգացնելու քաղաքացիական հասարակության այնպիսի ինստիտուտներ, որոնք ապագայում պետք է գործեին ի շահ ԱՄՆ-ի:

USAID-ը վերապատրաստում էր պետական պաշտոնյաների, մասնակցում հարկային օրենսդրության ու տարեկան բյուջեի մշակման աշխատանքներին, ինչպես նաև միջոցներ հատկացնում տեղեկատվական որոշակի ծրագրեր ու մարդասիրական գործունեություն իրականացնելու համար:

Մ. Սաակաշվիլին նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո այցելեց նախ ՌԴ, այնուհետև ԱՄՆ և, հանդիպելով տվյալ երկրների ղեկավարներին, նրանց հրավիրեց Վրաստան: ՌԴ նախագահ Վ. Պուտինը այդպես էլ չայցելեց Վրաստան, իսկ Ջ. Բուշը հաջորդ տարի (2005 թ.) պաշտոնական այց կատարեց Վրաստան՝ խոստանալով միշտ վրաց ժողովրդի կողքին լինել[10]:

Վրաստանի նոր ղեկավարության առաջին կարևոր առևտրատնտեսական ձեռքբերումներից մեկը 2005 թ. հուլիսից Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP) ծրագրի կիրարկումն էր, որի շրջանակներում Վրաստանի ձեռնարկատերերը և գործարարներն արտոնություններ ստացան շուրջ 3448 տեսակի ապրանքներ արտահանելու Միացյալ Նահանգներ առանց մաքսի (duty-free/ უბაჟო(ուբաժո))[11]: Օրինակ՝ միայն 2012 թ. Վրաստանից ԱՄՆ առանց մաքսի ար-

---

[9] Տե՛ս United States Agency for International Development, Georgia, USAID.gov, February 20, 2020, https://www.usaid.gov/georgia, մուտքը՝ 08.03.2020:

[10] Տե՛ս **Саакашвили М.Н.** Пробуждение силы: Уроки Грузии – для будущего Украины, “Маленькая страна в бальшом мире”, Фолио, 2016, էջ 228-252:

[11] Տե՛ս სავაჭრო პოლიტიკა რეჟიმები და ფორმები, "საქართველოს სავაჭრო პოლიტიკა", ვაჭრობის ხელშეწყობის ცენტრი, ექსპორტ - იმპორტი გზამკვლევი, ბათუმი, 2011-2012, էջ 38-39 (Առևտրի քաղաքականության եղանակներն ու ձևերը, «Վրաստանի առևտրային քաղաքականությունը», առևտրի խթանման կենտրոն, արտահանման - ներմուծման ուղեցույց, Բաթումի, 2011-2012):

տահանվել է 124 մլն դոլարին համարժեք տարբեր ապրանքներ[12]:

Հատկանշական է, որ Վրաստանը և Մոլդովան, լինելով ԱՊՀ անդամ երկրներ, միանալով GSP ծրագրին, նոր հնարավորություն ստացան որոշակիորեն նվազեցնելու ՌԴ-ի տնտեսական ազդեցությունն իրենց երկրներում, և որոշ ապրանքատեսակների համար ստեղծվեց այլընտրանքային բարենպաստ շուկա: ԱՄՆ-ն Վրաստանի համար ֆինանսական բնագավառում բացառիկ գործընկեր էր՝ սկսած 2003 թ. վերջից, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԱՄՆ-ն Վրաստանին ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում դրամաշնորհների, այլ ոչ թե փոխառության տեսքով: 2004 թ. Վրաստանին տրամադրվող ամերիկյան ֆինանսական օգնությունը ոչ միայն մեծացավ, այլև 2005 թ.-ից բացառիկ հնարավորություն ստացավ միջոցներ ձեռք բերելու նաև «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամից[13]:

Վրաստանի ու ԱՄՆ-ի միջև հետագա տնտեսական հարաբերությունների խորացման համար առաջադիմական քայլ էր Նյու Յորքում 2005 թ. սեպտեմբերի 13-ին Վրաստանի հետ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ստորագրած համաձայնագիրը՝ հինգ տարի ժամկետով, 295 մլն դոլար բյուջեով և աջակցության երեք հիմնական նպատակներով[14]:

Հնգամյա ծրագիրը խիստ արդյունավետ էր հատկապես Վրաստանի ամենաաղքատ շրջաններից մեկի՝ Ջավախքի բնակիչների համար: ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին անգամ Ջավախքում վերակառուցվեցին ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակության 224 կմ ճանապարհներ, գազաֆիկացվեց շրջանի մեծ մասը, բարելավվեցին ենթակառուցվածքները: Այս նախագիծն ամբողջովին իրականացնելու համար Վրաստանի կառավարությունը ևս պետական բյուջեից հատկացրեց 100 մլն դոլար[15]:

2013 թ. Սաակաշվիլիի վարչակազմին հաջողվեց մեկ անգամ ևս «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի հետ կնքել աջակցության պայմանագիր՝ 140 մլն դոլար բյուջեով, հիմնականում Վրաստանի գիտակրթական ոլորտում բարեփոխումներ անելու նպատակով[16]:

---

[12] Տե՛ս Office of the U.S. Trade Representative (USTR), "Georgia and the U.S. Generalized System of Preferences (GSP) Program", Executive Office of the President, May 2013, https://ustr.gov/sites/default/files/Georgia%20GSP%20handout%20for%20CLDP.pdf, մուտքը՝ 27.03.2020:

[13] Տե՛ս **მაგდა მაღრაძე,** ათასწლეულის გამოწვევის ფონდი - საქართველოს, "ჩვენ შესახებ" (**Մագդա Մաղրաձե**, Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Վրաստանի, «Մեր մասին»), http://www.mcageorgia.ge/index.php/about#, մուտքը՝ 29.03.2020:

[14] Տե՛ս Millennium Challenge Corporation-USA, Secretary of State Condoleezza Rice with the President of Georgia Mikheil Saakashvili on the Signing, New York, September 12, 2005, https://www.mcc.gov/news-and-events/speech/speech-091205-sethnessgeorgiasigning, մուտքը՝ 28.03.2020:

[15] Տե՛ս Millennium Challenge Corporation-USA, Georgia Compact, "MCG (MCA-Georgia) Closeout: Samtskhe-Javakheti Road Rehabilitation", April 11, 2019, https://www.mcc.gov/where-we-work/program/georgia-compact, մուտքը՝ 29.03.2020:

[16] Տե՛ս **მაგდა მაღრაძე,** ათასწლეულის გამოწვევის ფონდი - საქართველოს, "ჩვენ შესახებ" (**Մագդա Մաղրաձե**, Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Վրաստանի, «Մեր մասին»), http://www.mcageorgia.ge/index.php/about#, մուտքը՝ 29.03.2020:

Մ. Սաակաշվիլիի հաջորդ այցը ԱՄՆ տեղի ունեցավ 2006 թ. հուլիսի 6-ին: Ջ. Բուշը հավաստիացրեց, որ Վրաստանն ԱՄՆ-ի բարեկամն է, և պետք է հոգ տանեն վրաց ժողովրդի մասին[17]: Նա, շնորհավորելով Վրաստանի նախագահին և նրա կառավարությանը երկրում ազատ տնտեսական միջավայր ստեղծելու համար, ցանկություն հայտնեց շարունակելու աշխատել իրենց գործընկերների հետ, բացի այդ, խոստացավ գործուն աջակցություն ցուցաբերել երկրում ԵՄ ինտեգրման չափորոշիչներին համապատասխան փոփոխություններ իրականացնելուն, ինչը կնպաստի նաև տնտեսության զարգացմանը:

Վաշինգտոնում նախագահների հանդիպումը նպաստեց ավելի արագ հասնելու ԱՄՆ-ի հետ տնտեսական հարաբերությունների պարզեցմանը: Մեկ տարի անց՝ 2007 թ. հունիսի 20-ին, կողմերի միջև կնքվեց առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիր[18]: Ըստ դրա՝ ստեղծվեց ԱՄՆ-ի ու Վրաստանի առևտրի և ներդրումների խորհուրդ, որը վրացական կողմից ներկայացնում էր տնտեսական զարգացման նախարարությունը, իսկ ԱՄՆ-ից՝ առևտրի ներկայացուցչության գրասենյակը (USTR)[19]:

2008 թ. բավականին մղձավանջային տարի էր վրացական տնտեսության և ֆինանսական հատվածի համար: Օգոստոսյան պատերազմի հետևանքները, զուգորդվելով համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ, կտրուկ նվազեցրին օտարերկրյա ուղղակի ներդրումները (FDI) և սպառողների հետաքրքրությունը: Իսկ 2009 թ. Վրաստանի ՀՆԱ-ն 3,9 տոկոս անկում ապրեց: Հետպատերազմյան իրավիճակը հաղթահարելու համար Վրաստանը ԱՄՆ-ից ստացավ 1 մլրդ[20], իսկ ԵՄ-ից՝ 4,5 մլրդ դոլարի օժանդակություն, որը գոյացել էր Բրյուսելում կազմակերպված դոնորների համաժողովի նախաձեռնությամբ, և դրա շնորհիվ տնտեսությունը աճեց մոտ 4 տոկոսով[21]: Հետպատերազմյան օգնությունը փաստորեն նպաստեց Վրաստանին ֆինանսական ճգնա-

---

[17] Տե՛ս Սաքարթվելոս Պրեզիդենտը **Միխեիլ Սաակաշվիլի**, Ռելիզեբի, "Սաքարթվելոս Պրեզիդենտը Միխեիլ Սաակաշվիլի Ամերիկայի Միացյալ Նահանգների Պրեզիդենտ Ջորջ Բուշի հետ", 06.07.2006 (Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլի, թողարկումներ, «Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին հանդիպել է ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ»), http://www.saakashviliarchive.info/ge/PressOffice/News/Releases?p=3813&i=1, մուտքը՝ 14.04.2020:

[18] Տե՛ս Սաքարթվելոս Սահմանադրական մաքսային, ՀարՀՈ Միջազգային առևտրի և ներդրումների Սաքարթվելոսի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև, գրանցման կոդ - 480420010.03.030.000659 (Վրաստանի օրենսդրական տեղեկագիր, Վրաստանի և ԱՄՆ-ի միջև առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիր, Գրանցման կոդ):

[19] Տե՛ս The Office of the U.S. Trade Representative (USTR), Mission of the USTR, Executive Office of the President, https://ustr.gov/about-us/about-ustr, մուտքը՝ 15.04.2020:

[20] Տե՛ս U.S. Department of State, "Remarks on U.S. Economic Support Package for Georgia", September 3, 2008, https://2001-2009.state.gov/secretary/rm/2008/09/109129.htm, մուտքը՝ 16.04.2020:

[21] Տե՛ս **Revaz Sakevarishvili**, Georgia: Continued Reverberations of the Crisis, Caucasus analytical digest, № 18, 5 July 2010, էջ. 15-16:

ժամի հետևանքներն ավելի արագ հաղթահարելու, քան դա կաներ առանց պատերազմի:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Վրաստանի նոր վարչակազմը չկարողացավ ապահովել երկրի ու վրաց ժողովրդի համար խոստացած բազմավեկտոր ու կայուն զարգացումը, քանի որ 2004 թ.-ից սկսած սրվեցին հարաբերությունները հարևան Ռուսաստանի հետ, որի հետևանքով կողմերի միջև ապրանքաշրջանառությունն ու ներդրումները նվազեցին: Երկկողմ տնտեսական հարաբերություններում ամենածանր փուլը վրա հասավ 2008 թ.՝ ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո, երբ կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունները վերջնականորեն խզվեցին, այնուհետև Վրաստանը դուրս եկավ ԱՊՀ-ից[22]: Վերջին երկու կարևոր իրադարձությունները լրջորեն ազդեցին Վրաստանի տնտեսական կայուն զարգացման վրա, սակայն միաժամանակ նոր ճանապարհ բացվեց՝ կյանքի կոչելու Սաակաշվիլիի որդեգրած արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը՝ բանակցել ԵՄ-ի հետ՝ անդամակցության նպատակով:

ԱՄՆ-ն, օգտվելով Վրաստան-ՌԴ առճակատումից, կարողացավ իր «հակառակորդ» երկրի հարևանությամբ ձեռք բերել ռազմավարական գործընկեր: 2009 թ. ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության գործարկումից (SPC) անմիջապես հետո տեղի ունեցան երկկողմ հանձնաժողովների կանոնավոր երկխոսություն և տնտեսական, էներգետիկայի ու առևտրի աշխատանքային խմբերի հանդիպումներ, որոնց նպատակն էր համակարգել Վրաստանի տնտեսական զարգացման ռազմավարությունը և ընդլայնել ԱՄՆ-Վրաստան երկկողմ տնտեսական համագործակցությունը[23]:

Սա Բուշ-Սաակաշվիլի վարչակազմերի վերջին ձեռքբերումն էր, քանզի 2009 թ. հունվարի 20-ին տեղի ունեցավ Միացյալ Նահանգների նորընտիր նախագահի՝ դեմոկրատ Բարաք Օբամայի երդմնակալությունը, որի ընթացքում նա հայտարարեց ՌԴ-ի հետ «վերագործարկման քաղաքականության» անհրաժեշտության մասին[24]:

Վրաստանը կարծես թե հայտնվեց երկրի անվտանգության գլխավոր երաշխավորին կորցնելու վտանգի առջև: Վրացական կողմի մտահոգությունները փարատելու համար հուլիսի 22-ին Թբիլիսի ժամանեց ԱՄՆ փոխնախագահ Ջո (Ջոզեֆ) Բայդենը և, ելույթ ունենալով խորհրդարանում, հավաստիացրեց, որ ՌԴ-ի հետ «վերագործարկման քաղաքա-

---

[22] Տե՛ս “Грузия официально вышла из состава СНГ”, BBC NEWS-Русская служба, 17 августа՝ 2009, https://www.bbc.com/russian/international/2009/08/090817_georgia_leaves_cis, մուտքը՝ 25.04.2020:

[23] Տե՛ս United States Department of State, United States-Georgia Charter on Strategic Partnership, Section III: Economic, Trade and Energy Cooperation, January 9, 2009, https://www.state.gov/united-states-georgia-charter-on-strategic-partnership/, մուտքը՝ 22.04.2020:

[24] Տե՛ս “NN's live Broadcast of the Inauguration of Barack Obama as the 44th President of the United States on Tuesday, January 20th, 2009”, https://www.youtube.com/watch?v=e4_lV6f228Q, մուտքը՝ 26.04.2020:

կանությունը» չի լինելու Վրաստանի հաշվին, ու ԱՄՆ-ն պատրաստ է աջակցել Վրաստանին բոլոր ուղղություններով՝ քաղաքական, ռազմական, տնտեսական և այլն: Բայդենը նշեց նաև, որ իր այցը Թբիլիսի նախատեսված էր նախօրոք՝ նախագահ Օբամայի Մոսկվա այցից անմիջապես հետո, ինչը, ըստ երևույթին, նպատակ ուներ մեկընդմիշտ ցրելու վրաց գործընկերների «վերագործարկման քաղաքականության» հետևանքների վերաբերյալ մտահոգությունները[25]:

ԱՄՆ-ի նոր վարչակազմի հետ հարաբերություններն ամրապնդելու և ավելի խորացնելու հեռանկարով 2010 թ. հոկտեմբերի 5-ին Վրաստանի վարչապետ Նիկոլոզ (Նիկա) Գիլաուրին աշխատանքային այց կատարեց ԱՄՆ: Տարբեր պաշտոնյաների ու մասնավոր կազմակերպությունների ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ նա կարողացավ լուրջ ձեռքբերումների հասնել և նոր ներդրումներ ու ֆինանսական հոսքեր ապահովել Վրաստանի տնտեսության համար[26]:

Վրաստան-ԱՄՆ հարաբերությունների զարգացմամբ հետ մեկտեղ կողմերի միջև երկկողմ ներդրումային պայմանագրի, առևտրի ու ներդրումների շրջանակային համաձայնագրի և ռազմավարական գործընկերության կիրարկման պայմաններում ստեղծվել էին գրեթե բոլոր նախադրյալներն ազատ առևտրի համաձայնագրի շուրջ երկխոսություն սկսելու համար[27]:

Ազատ առևտրի վերաբերյալ երկխոսության սկիզբ կարող ենք համարել 2012 թ. հունվարի 30-ին Սպիտակ տանը նախագահների միջև տեղի ունեցած հանդիպումը, որտեղ Օբաման, արձանագրելով շատ ամուր երկկողմ հարաբերություններ ունենալու փաստը, հավելեց, որ ուսումնասիրվելու է Վրաստանի հետ ազատ առևտրի համաձայնագրի հնարավորությունները[28]: Կողմերը քննարկեցին նաև, թե ինչպես կարող են շարունակաբար ամրապնդել երկու երկրների առևտրային հարաբերությունները, ընդհուպ ազատ առևտրի մասին համաձայնագրի ստորագրման հնարավորությունը: Հաջորդ կարևոր քայլը ազատ առևտրի շուրջ երկխոսության համար պաշտոնյաների հանդիպումների օրակարգի ձևավորման նախապատրաստական աշխատանքներն էին: Այս նպատակով 2012 թ. ապրիլի 22-ին Վրաստանի վարչապետ Գիլաուրին աշխատանքային այց կատարեց Միացյալ Նահանգներ, որ-

---

[25] Տե՛ս **Ивлиан Хаиндрава,** Грузия-2009: год без названия, КАВКАЗ-2009, Ежегодник Института Кавказа, Ер., 2011, էջ 48:

[26] Տե՛ս საქართველოს მთავრობა, "პრემიერ-მინისტრის ვიზიტი აშშ-ში", 05 ოქტომბერი 2010 წ. (Վրաստանի կառավարություն, «Վարչապետի այցը ԱՄՆ», 05 հոկտեմբերի 2010 թ.), http://gov.ge/index.php?lang_id=RUS&sec_id=90&info_id=31406, մուտքը՝ 15.03.2020:

[27] Տե՛ս **J. J. Carafano, A. Mrachek,** Georgia Deserves a Free Trade Agreement with America, The Heritage Foundation, Oct 15th, 2019, https://www.heritage.org/europe/commentary/georgia-deserves-free-trade-agreement-america, մուտքը՝ 14.03.2020:

[28] Տե՛ս "Obama Meets Saakashvili", Civil.ge, 31/01/2012, https://civil.ge/archives/121715, մուտքը՝ 30.04.2020:

տեղ հանդիպեց ԱՄՆ-ի առևտրի ներկայացուցիչ Ռոն (Ռոնալդ) Քըրքի հետ: Նրանք պայմանավորվեցին նույն տարվա մայիսի վերջից սկսել բարձր մակարդակի երկխոսություն Վրաստանի և Միացյալ Նահանգների միջև առևտրի և ներդրումային կապերի խորացման վերաբերյալ[29]: Այս երկխոսության հիմնական նպատակը երկու երկրների միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի մշակման մեկնարկն ազդարարելն էր:

Պաշտոնական Թբիլիսիի և Վաշինգտոնի միջև տնտեսական հարաբերությունների խորացման ամենաբարձր մակարդակը սկսվեց առևտրի և ներդրումների շուրջ երկխոսությամբ: Կողմերի նախնական պայմանավորվածության համաձայն՝ առաջին պաշտոնական հանդիպումը տեղի ունեցավ 2012 թ. մայիսի 29-ին Վաշինգտոնում[30]: Քննարկեցին երկկողմ առևտրի և ներդրումների ավելացման մի շարք տարբերակներ՝ ներառյալ ազատ առևտրի համաձայնագրի հնարավորությունը, նորացված ներդրումային համաձայնագիրը և այլն, որոնք միտված էին հեշտացնելու առևտուրը և ներդրումները: Չնայած Սաակաշվիլիի վարչակազմի գործադրած բոլոր ջանքերին՝ այդպես էլ չհաջողվեց ԱՄՆ-ի հետ հասնել ազատ առևտրի վերաբերյալ համաձայնագրի ստորագրման տրամաբանական ավարտին: Այնուամենայնիվ, Վրաստան-ԱՄՆ տնտեսական հարաբերությունները լուրջ զարգացում ապրեցին 2003-2013 թթ.:

2003 թ. սկսած՝ Վրաստանը Համաշխարհային բանկի կողմից ճանաչվել է ամենաարագ բարեփոխումներ իրականացնող երկրներից մեկն աշխարհում և կոռուպցիայի դեմ պայքարի առաջատար երկիր[31]:

Վրաստանը լուրջ հաջողությունների է հասել տնտեսության մասնավոր հատվածի զարգացման գործում և, ըստ Համաշխարհային բանկի բիզնես անելու որակավորման (Doing Business ranking) ցուցանիշի, 2005 թ. զբաղեցնելով 112-րդ հորիզոնականը՝ արագ բարեփոխումների շնորհիվ 2007 թ. բարձրացել է 18-րդ տեղը[32]: Այդուհանդերձ, Վրաստանը ԱՄՆ-ի հետ սերտ հարաբերություններ ունենալու և զարգացնելու համար կատարել է բազում զիջումներ՝ ի վնաս այլ երկրների հետ կապերի զարգացման: Դա առավել ակներև է տնտեսական բնագավառում: Դրա վառ օրինակներից են Իրանի և ՌԴ-ի հետ հարաբերությունների վատթարացումը: Վրաստանի իշխանությունները զգուշավոր քաղաքականություն են վարում Իրանի հետ, որպեսզի չբորբոքեն ԱՄՆ-ի

---

[29] Տե՛ս საქართველოს მთავრობა, პრემიერ-მინისტრის ვიზიტი აშშ-ი, 22 აპრილი 2012 წ. (Վրաստանի կառավարություն, վարչապետի այցը ԱՄՆ, 22 ապրիլի, 2012 թ.), http://gov.ge/index.php?lang_id=geo&sec_id=248&info_id=33615, մուտքը՝ 01.05.2020:

[30] Տե՛ս Office of the U.S. Trade Representative (USTR), "U.S. and Georgia Convene High-Level Dialogue to Discuss Strengthening Bilateral Trade and Investment Relations", Executive Office of the President, 05/29/2012, https://ustr.gov/about-us/policy-offices/press-office/press-releases/2012/may/us-georgia-dialogue-trade-investment, մուտքը՝ 25.03.2020:

[31] Տե՛ս "Georgia-Market Overview", Export.gov, last published: 8.27.2019, https://www.export.gov/article?series=a0pt0000000PAtpAAG&type=Country_Commercial__kav մուտքը՝ 16.03.2020:

[32] Տե՛ս Georgia and the World Bank Group, "25 Years of Partnership", 2017, էջ 40:

և արևմտյան գործընկերների զգացմունքները: Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդը հայտարարել էր, որ Վաշինգտոնը ամենայն ուշադրությամբ հետևում է վրաց-իրանական հարաբերությունների զարգացմանը: Պատահական չէ, որ վրացական կողմը մերժեց իրանական «Պասարգադ» բանկի առաջարկը, որը ցանկություն էր հայտնել Թբիլիսիում բացելու իր մասնաճյուղը[33]: Իսկ Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացումը, հատկապես նրա հետ առևտրային հարաբերությունների նվազումը հանգեցրել են արտաքին առևտրի պակասուրդի աճին, որը 2008 թվականից սկսած այդպես էլ չի հաջողվում ծածկել արևմտաեվրոպական շուկաների հաշվին[34]: Օրինակ՝ Վրաստանի ու ՌԴ-ի միջև ապրանքաշրջանառությունը 2002-2006 թթ. եղել է ամենաբարձրը, իսկ դրանից հետո՝ մինչև 2013 թ., ՌԴ-ն զիջել է դիրքերը Թուրքիային, Ադրբեջանին և Ուկրաինային[35]: Միաժամանակ, ուռճացված ռազմական բյուջեն դանդաղեցնում է տնտեսական ու քաղաքական ինստիտուտների ձևավորման տեմպերը, իսկ միավեկտոր կողմնորոշումը լրջորեն սահմանափակում է Վրաստանում ներդրումների ու բիզնեսի հնարավորությունները[36]:

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրակացնել, որ պաշտոնական Թբիլիսիի ու Վաշինգտոնի միջև հարաբերությունների տնտեսական ուղղությունը, սկսած 2004 թ.-ից, ամրապնդվել է տարատեսակ, երկարամյա ծրագրեր կյանքի կոչելու շնորհիվ. ԱՄՆ-ն միլիարդավոր դոլարներ է հատկացրել Վրաստանի տնտեսության, պետական տարբեր ինստիտուտների ու ենթակառուցվածքների զարգացման համար: Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմը Մետաքսի ճանապարհի խոշոր ռազմավարական հայեցակարգի շրջանակներում սկսեց իրականացնել ընդգրկուն գաղափարական-քաղաքակրթական ծրագիր, որը, սակայն, Օբամայի նախագահության տարիներին մի շարք արտաքին քաղաքական ու տնտեսական օբյեկտիվ գործոնների պատճառով վերածվեց սպառողական ծրագրի, որը կոչված էր զուտ բարձրացնելու Հարավային Կովկասում Միացյալ Նահանգների վարած քաղաքականության արդյունավետությունը և պաշտպանելու ամերիկյան գործարար շահերի մրցունակությունն ապահովող կառուցակարգերը Ռուսաստանի ու Իրանի նման խոշոր խաղացողներից:

ԱՄՆ-ն մեծ ուշադրություն է դարձնում այնպիսի տնտեսական ծրագրերի իրականացմանը, որոնք Վրաստանի տարածքով ապահո-

---

[33] Տե՛ս **Molly Corso**, Georgia: Is Tehran Trying to Use Tbilisi to Evade Sanctions, Eurasianet, Jul 15. 2013, https://eurasianet.org/georgia-is-tehran-trying-to-use-tbilisi-to-evade-sanctions, մուտքը՝ 07.03.2020:

[34] Տե՛ս **Gvalia G., Siroky D., Lebanidze B., Iashvili Z.,** Thinking outside the Bloc: Explaining the Foreign Policies of Small States, Security Studies, № 22, 2013, էջ 121-123:

[35] Ավելի մանրամասն տե՛ս գծապատկերը:

[36] Տե՛ս **MacFarlane S.N.,** Georgia: National Security Concept versus National Security, London: Chatam House, 2012, էջ 8-9:

վում են կասպիական էներգառեսուրսների փոխադրումը դեպի համաշխարհային շուկա: Այս համատեքստում Վրաստանի աշխարհագրական դիրքը երկիրը վերածել է Արևելք-Արևմուտք էներգետիկ կամրջի կարևորագույն օղակի: Նաև պետք է արձանագրենք, որ թեև վրաց-ամերիկյան հարաբերություններում սկսվեց երկխոսության իրապես նոր շրջափուլ, այնուամենայնիվ այդ հարաբերությունների բովանդակությունը զգալիորեն տարբերվում էր Սաակաշվիլիի և իր քաղաքական թիմի ակնկալիքներից: Մասնավորապես, 2008 թ.-ից սկսած՝ համաշխարհային քաղաքականությունում և տնտեսությունում ծագեցին նոր միտումներ, որոնք լրջագույն ազդեցություն թողեցին Հարավային Կովկասում ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության վրա: Նավթի համաշխարհային գների անկումը, կասպյան ածխաջրածնային պաշարների նվազումը, Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցները ժամանակավորապես հանելը, Կենտրոնական Ասիայում Չինաստանի աշխարհաքաղաքական ազդեցության մեծացումը, Եվրասիական տնտեսական միության կազմավորումը և մի շարք այլ իրադարձություններ վերջնականապես ի չիք են դարձնում ԱՄՆ-ի՝ Մետաքսի ճանապարհի ռազմավարությունը և ամերիկյան կառավարական հաստատությունների առջև դնում են Հարավային Կովկասում վարած արտաքին քաղաքական առաջնահերթությունների փոփոխության անհրաժեշտություն:

Այնուամենայնիվ անհերքելի է, որ Վրաստանը ԱՄՆ-ի առանցքային դաշնակիցն է տարածաշրջանում և էներգետիկ ռեսուրսների դարպասը՝ Կասպից ծովից Եվրոպա և դրանից դուրս:

Գծապատկեր



Աղբյուր՝ Վրաստանի ազգային բանկի պաշտոնական կայքէջ, https://www.nbg.gov.ge/index.php?m=348:

Բանալի բառեր - *Վրաստանի տնտեսություն, կայուն զարգացում, ԱՄՆ աջակցություն, երկկողմ պայմանագիր, սև շուկա, էներգետիկ միջանցք, Հարավային Կովկաս, Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ), տնտեսական հարաբերություններ, ազատ առևտուր, Մետաքսի ճանապարհ, հազարամյակի մարտահրավեր, Արևմուտք-Ասիա խաչմերուկ, ապրանքաշրջանառություն*

ЭДГАР ЧАХОЯН – *Динамика развития экономических отношений между Грузией и США в 2003-2013 гг.* – Статья посвящена грузино-американским экономическим отношениям в период президентства Михаила Саакашвили. Детально рассмотрены мотивы формирования и укрепления тесных экономических связей между сторонами, а также успехи, достигнутые в результате частых встреч высокопоставленных чиновников. Проанализированы также внешнеэкономические и политические подходы президентов США Джорджа Буша и Барака Обамы к Грузии, особенно после «революции роз». Отмечено значение двусторонних документов о финансово-экономических отношениях, подписанных сторонами, а также факторы, препятствующие сбалансированному развитию грузинской экономики. Особое внимание уделяется экономическим отношениям между Грузией и Российской Федерацией. Дан также сравнительный анализ объёма товарооборота (экспорта и импорта) по годам.

Ключевые слова: *экономика Грузии, устойчивое развитие, поддержка США, двустороннее соглашение, черный рынок, энергетический коридор, Южный Кавказ, Российская Федерация, экономические отношения, свободная торговля, Шелковый путь, вызовы тысячелетия, перекресток Запада и Азии, товарооборот*

EDGAR CHAKHOYAN – *Dynamics of Development of the Economic Relations between Georgia and the USA in 2003-2013.* – The article is dedicated to the study of the dynamics and ways of developing Georgia-US economic relations during the presidency of Mikheil Saakashvili in Georgia. The motives for the formation and strengthening of close economic relations between the parties are discussed in detail, as well as the success achieved as a result of the frequent meetings of senior officials of the two countries. US Presidents George W. Bush's and Barack Obama's administrations' foreign economic and political approaches to Georgia, especially since the Rose Revolution in 2013, have been explored and studied. The role and significance of the bilateral documents on financial and economic relations signed between the parties were analyzed. Various facts have been observed that have hampered the multifaceted and balanced development of the Georgian economy. Particular attention is paid to the development of the economic relations between Georgia and the Russian Federation. The article also provides a comparative analysis of the volume of trade turnover (export and import) by year.

Key words: *Georgia's economy, sustainable development, US support, bilateral agreement, black market, energy corridor, South Caucasus, Russian Federation, economic relations, free trade, Silk Road, Millennium Challenges, West-Asia crossroad, trade turnover*